

Լ. Գ. Աղաջան

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

Բ.

1. ԵՐԿԻՐ ↔ ԵՐԿԻՆՔ ↔ ԵՐԿ → ՀԵՐԿ → ԵՐԿՈՒՆՔ → ԵՐԿԱՒ

Լեզվի նոր ուսմունքի մեջ բառի ստուգաբանությունը կարևորագույն նշանակություն ունի: Հրաժարվելով բուրժուական լեզվաբանության մեջ կատարվող ֆորմալ, հակապատմական գոտիաբանություններից՝ լեզվի նոր ուսմունքի հիմնադիր ակ. Ն. Յա. Մառը առաջ քաշեց բառի հնէաբանական վերլուծության սկզբունքը և դա մի վստահելի միջոց դարձրեց մարդկային մտածողության նախնական ստադիաների ուսումնասիրության համար: Բառերի հնէաբանական ուսումնասիրությամբ Մառը ցույց տվեց, որ բառերի ժամանակակից իմաստը բավական չէ բառերի ստուգաբանության համար. բառերի պատմությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է լուսաբանել, հայտնաբերել այն նախնական իմաստը, որ ունեցել է այս կամ այն բառը յուր ծագման ժամանակ: Դա անհրաժեշտ է այն բանի համար, որ միայն դրանով կարելի է պարզել, թե տվյալ երևույթը կամ առարկան ինչպես է գիտակցվել հասարակության զարգացման տվյալ աստիճանում: Եվ որովհետև իրերի ու երևույթների գիտակցումն արտահայտում է հասարակության նյութական կեցությունը, որով նա պայմանավորված է, ապա՝ բառերի հնէաբանական վերլուծությունը լույս է սփռում ոչ միայն հասարակական մտածողության նախնական ստադիաների վրա, այլև՝ այդ մտածողությունը պայմանավորող հասարակական հարաբերությունների վրա, հասարակական կեցության վրա: Իր բաղժաթիվ աշխատություններում Մառը ստուգաբանել է հայերեն բաղժաթիվ բառեր և հնէաբանական վերլուծությամբ բացահայտել դրանց նախնական իմաստը: Ելնելով Մառի այդ սկզբունքներից՝ մեր նպատակն է այս հոգվածում ցույց տալ հայերեն մի շարք բառերի նախնական կապը միմյանց հետ և դրանով իսկ պարզաբանել այն ուրույն մտածողությունը, որ պայմանավորել է այդ բառերի բովանդակության միասնությունը:

Իր ուսումնասիրությունների մեջ Մառը բաղժաթիվ օրինակներով ցույց է տալիս, որ երկինգ, երկիր, ջուր ինչպես և կիճ հասկացությունները նախնական, կոսմիկական մտածողության շրջանում սերտորեն կապված են եղել միմյանց հետ. «Судя по сделанным пока в Тифлисе наблюдениям, ручная речь оправдывает палеонтологически добытое новым учением об языке космическое мировоззрение о трех небесах, верхнем—‘солнечном’, нижнем—‘земле’ и подземном—‘водном’... Наличные у шумеров в клинописи eme-sal, eme-gal, eme-tena, eme-ku, особый

культовый язык, надо понимать лишь как 'величественный' (gal) язык, когда и gal, и sal, и ku могут быть поняты как 'рука' и 'женщина', а, следовательно, космическая стихия ('вода-море', 'земля', 'небо')... Слово „земля“ у русских... значило 'небо', сначала 'два' и потом 'три неба', так у немцев 'земля', собственно zemei-e, значит 'небо', наше 'небо', звучит оно der „Himmel“, а у французов (смешно сказать) 'подошва' звучит la semelle¹.

Երկնքի և երկրի այս միասնական գիտակցումը և, նույնիսկ նույնացումը, պատահական երևույթ չէր. դա պայմանավորված էր մարդկային հասարակության կյանքով, այն հասարակության, որ որսորդությունից անցնում էր երկրագործության: Հողի նախնական մշակումը ղեկավարողացած կամ քիչ դարգացած հողագործական տեխնիկայով՝ մարդու աշխատանքը կախված էր պահում բնական պայմաններից: Հողն այդ շրջանի մարդու կողմից գիտակցվում էր իբրև բարիքներ ծնող, բայց միևնույն ժամանակ՝ հողի այդ դերը պայմանավորված էր բնական պայմաններով: Արևի և անհասարակ երկնքի դերը նույնքան մեծ էր, որքան և հողինը, ավելի ճիշտ, նրանք ընդհանուր գիտակցում էին իբրև մի միասնություն: Արևի ու երկինք-երկրի այդ դերով էլ պայմանավորված էր նախնական տոտեմիստական մտածողության փոխարինումը կոսմիկական մտածողությամբ: „Земледельческая культура вела общественные организации тотемистического мировоззрения к космическому. Чередующиеся периоды года, необходимые к учету при земледельческом труде, выдвинули солярный культ. Солнце заступало место прежнего разрозненного тотема, различного в различных охотничьих группировках. Солнце становилось общим тотемом земледельческого труда“.² Այս մտածողությամբ էլ, ահա իրար հետ կապվում են ոչ միայն երկինքն ու երկիրը՝ այլև հողագործության հետ կապված մի շարք երևույթներ: Այդ բանը լավագույն կերպով բացահայտվում է հայերեն մի ամբողջ բառափնջի միջոցով:

Ամենից առաջ երկրի ու երկնքի միասնությունն արտահայտված է հենց երկու բառերի միևնույն արմատով. երկու բառն էլ կազմված են երկ-արմատից. մասնիկ են և՛-իր (ինչպես ունենք՝ կց-իր, ան-հար-իր և այլն) և-ին (ինչպես՝ վեր-ին, ներք-ին, ստոր-ին և այլն): Նախամարդու գիտակցության մեջ երկրի ու երկնքի միասնությունը հիմնված էր ոչ միայն այն բանի վրա, որ իր նյութական կյանքը հիմնված էր դրանց շարունակական բարիքների վրա, ուրեմն՝ իր կյանքը հայտնի չափով կախված էր այդ երկուսից էլ, այլև տեսողական կերպով երկինքն ու երկիրն ընկալում էր իբրև իրար միացած, մի ամբողջություն կազմող երևույթներ: Ուստի և ընդհանուր պատահական չէ, որ նա այդ երկուսն ըմբռնում էր որպես մի ամբողջություն և երկսին էլ կոչում նույն անունով:

Եթե մի կողմից նախնական հողագործի կյանքը կախված էր բնությունից, մյուս կողմից էլ, այնուամենայնիվ, պայմանավորված էր իր մշա-

¹ Н. Я. Марр. Язык и мышление, М. Л. 1931, стр. 37, 39—40, 41.

² И. И. Мещанинов, К вопросу о стадийности в письме и языке, Л. 1931, стр. 47.

կույթով, անշուշտ պրիմիտիվ մշակույթով: Տառապալից էր այդ աշխատանքը, դժվարին, և փոքր էր նրա արտադրողականությունը. այդ նախնական վիճակում մարդն իր աշխատանքով դեռևս անզոր էր արդյունավետ կերպով մաքառել ընտելյան դեմ և հաղթահարել նրան: Բայց և այնպես նա տքնում էր, զգործում էր երկիրը, այսինքն՝ մշակում էր հողը: Եվ, ահա, ընտելյան երևույթներով պայմանավորված իր արդյունավետ կամ, ընդհակառակն, ապարդյուն աշխատանքն էլ նա կոչում էր ընտելյան երկուհզոր գործոնների՝ երկրի ու երկնքի անունով՝ երկ աշխատանք, գործաշայերեն այս երկ բառը համարվում է իրանական փոխառություն:

Փոխառյալ է կորած իրանյան մի ձևից. որի ներկայացուցիչներն են սոգդ. *гк* զգործ, պարտականություն, մանիք. պհլ. *gā* արգ, յաղնորի *ark* զգործա՝ Մեր կարծիքով չայերեն երկ-ը ոչ մի գործ չունի սոգդիերեն ու յաղնորի հիշյալ բառերի հետ. նա իրանական փոխառություն չէ, և եղած նմանությունը պատահական է:

Նույն երկ աշխատանք, գործա բառի հետ է կապվում նաև երկ. «1. վարած հող, արտ, 2. վարելը» բառը, որ առաջին իմաստով նույնանում է երկիր բառին, իսկ երկրորդ իմաստով՝ երկ զգործա բառին:²

Հնդեվրոպաբանների կողմից երկ արմատը համարված է հնդեվրոպական, բայց Հր. Աճառյանը, ենթադրաբար հիշելով այդ, իր կողմից հերքում է միանգամայն հիմնավոր կերպով: Հերկ և երկին բառերի կապը լուսարանել է Մառը, յուր «Новый переворот в работе по яфетической теории» հոդվածում:

Եթե կոսմիկական մտածողությամբ երկինգ-երկիր-երկ-եբերկ հասկացությունները միանում են նախամարդու գիտակցության մեջ, ապա՝ դրանց հետ միանում է նաև երկ-ուեգ || երկ-ճել բառը: Այս բառը «Արմատական բառարանում» միացվում է երկճել բառին և հանվում ենթադրյալ *dwi* «վախենալ» արմատից: Ինքնին հասկանալի է, որ այս ստուգաբանությունն ընդունելի չէ: Չխոսելով «նախալեզվյան» հակապատմական տեսության մասին, որ վաղուց արդեն ջախջախված է մարքսիստական լեզվաբանության կողմից, այստեղ տվյալ երկ-ուեգ || երկ-ճել բառի մասին պետք է ասել հետևյալը: Երկ-ուեգ || երկ-ճել բառը ոչ մի կապ չունի երկճել բառի հետ. նա ունի երկու հիմնական, սկզբնական իմաստ՝ «պտղաբերել, ծնունդ ունենալ» և «տառապել, ծննդյան ցավ քաշել»: Այս երկու իմաստներն էլ կապվում են երկ «երկիր, երկինք, գործ, հերկ» արմատի հետ և հենց նրանցից էլ բխում են: Որ երկիր, եղ բառերի հետ կապվում է կին, ծնող հասկացությունը, կոսմիկական մտածողությամբ, շատ լուր ապացուցվում է հունարեն *γῆ* «երկիր» և *γυνή* «կին» բառերով: Առաջին բառի ստուգաբանությունը հայտնի չէ, համենայն դեպս նա հնդեվրոպական չի համարվում: Երկրորդ՝ *γυνή* «կին» բառը համարված է հնդեվրոպական և միացված չայերեն կին, ռուսերեն՝ жена, սլավերեն *zha*, սանսկրիտ՝ *janī* բառերին՝ լուրըն էլ «կին» իմաստով: Որ կին բառը ընդհանուր է հունարեն, չայերեն, ռուսերեն, պարսկերեն լեզուներում, դրա դեմ մենք առարկություն չունենք: Բայց որ դա ծագում է հերիաթային «նախալեզվի» ինչ որ արմա-

¹ Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. Բ, էջ 823:

² Հմատ. Н. Я. Марр, Избранные работы, т. I, стр. 326.

տից, և որ այդ արմատն էլ սկզբից ի վեր նշանակել է «կին» մեր հասկացութեամբ, այդ անընդունելի է: Ելնելով այն փաստից՝ որ հիշյալ բոլոր լեզուներում էլ այդ բառն այժմ «կին» է նշանակում, հնդեվրոպարանները այդ արդիական իմաստը վերադրում են նաև նախնական շրջաններին, նույնացնելով «կին» բառի մեր ըմբռնումը նախամարդու ըմբռնման հետ և, հետևավարար, ժամանակակից մտածողությունը՝ նախնական մտածողության հետ: Մինչդեռ, իրականում բոլորովին այլ է եղել նրա նախնական իմաստը, որ լեզվաբանութեան մեջ կոչվում է բնիմաստ: Հունարենի $\gamma\eta$ և $\gamma\upsilon\nu\eta$ բառերն ունեն ընդհանուր ծագում, ըստ որում այդտեղ ունենք կին և երկիր հասկացություններն միասնություն, որ արդյունք է նրանց ընդհանուր հատկանիշի՝ փոփոխություն, արտադրություն հատկանիշի: Որ կին բառը յուր բնիմաստով նախապես կարող էր նշանակել «ստրուկարերու», արտադրող, սնուցող, հաստատվում է սանսկրիտ՝ *stri* և լատիններեն *femina* բառերով, որոնցից առաջինը նշանակում է «սեբեզ», արտադրող, իսկ երկրորդը «սնուցող»: Վերջապես՝ կին հասկացությունը կապվում է երկիր հասկացության հետ նաև իրրե տառապող, տքնող, որ, ինչպես վերը ցույց տվինք, ունենք հայերեն երկ→երկու-ու-մ բառերով: Կնոջ՝ իրրե տառապողի, տքնողի հատկանիշով բնութագրվող էակի՝ լավագույն օրինակն է տալիս զերմաներենը, որի մեջ *Weib* «կին» բառի բնիմաստն (նախնական իմաստն) է «շարժարվող, տառապող»: Նշանակում է հիշյալ $\gamma\upsilon\nu\eta$, կին, жена, зан, жани բառերը նույնպես կապված են չլ «երկիր» բառի հետ:

Ի վերջո հայերեն երկ-«երկիր», երկին, երկ, երկունք, հերկել» արմատի հետ է կապում Մառը նաև երկաթ բառը, որ այդպես կոչվել է «для отличия металла, обиходного предмета, от космического, по которому он был назван».¹

Բացահայտելով երկին(f) և երկ-ել բառերի նախնական միասնությունը՝ Մառը եզրակացնում է, թե զրանք վկայում են երկին(f) բառի նախնական բազմիմաստության մասին: Մեր կողմից քննարկված բառաշարքը կրկին անգամ ապացուցում է Մառի այդ դրույթը. երկ նախապես եղել է մի բազմիմաստ, ավելի ճիշտ բարդ իմաստ ունեցող բառ, որ իր մեջ է առել երկիր, երկին, երկ «զործ», երկ, երկու-մ, ապա և՛ երկաթ հասկացությունները: Հետագայում միայն, մտածողության զարգացման ավելի բարձր շրջանում զրանցից յուրաքանչյուրն առանձնացել է՝ դառնալով նույն արմատից ծագած միջինքնուրույն, անկախ բառ—հասկացություն:

2 . Ա Կ Ն

Այն բառը հայերենում, ինչպես և շատ ուրիշ լեզուներում, ստացել է բազմաթիվ իմաստներ: Հայերենում նա նշանակում է. «աչք, արև, հույս, թանկագին քար, անիվ, ծառի աչք (բողբոջ), փոս, անցք»: Բնաստի այս անցումները, որոնք շատ մեծարժեք նյութ են մատակարարում նախնական մտածողության ուսումնասիրության համար, բավականաչափ ուշա-

¹ Н. Я. Марр, Избранные работы, т. I, стр. 331.

դրությունն չեն արժանացել: Հին, տրադիցիոն կարծիքն այն է, թե այդ անցումներն արդյունք են պատկերավոր մտածողության, պատկերավոր արտահայտությունների, որոնք հիմնված են՝ այդ երևույթների արտաքին նմանության վրա: Այս բացատրությունը սակայն ոչինչ չի ասում իմաստային այդ անցումների մասին: Դեռ ավելին, բացատրելով այդ անցումները այժմյան մտածողությամբ և այժմյան պատկերավոր արտահայտություններով՝ այդ կարծիքի կողմնակիցները մթազնում, քողարկում են նախնական այն ուրույն մտածողությունը, որ դրանց հիմքն է հանդիսացել: Այդ կարծիքին հետևելու դեպքում անբացատրելի կմնային, օրինակ, ակն թափք և ակն թափքուրի ակունք, Վոս, անցք, Վոսյո՝ իմաստային անցումները: Զե՞ որ դրանցից ոչ մեկն էլ չի բնորոշվում կորուսյալ, որով նմանություն ստեղծվել էր աչքի և նրանց միջև: Մյուսներն էլ (Վարե, անիվ) թեև այսօրվա մեր մտածողությամբ բոլոր ուրիշ հատկանիշների հետ ներառում են նաև ձևի կորուսյալ հատկանիշը, սակայն նախնական մտածողությամբ այդ հատկանիշով չեն բնորոշվել:

Այդ բանն ապացուցելու համար նախ և առաջ պարզենք ակն թափք բառի նախնական իմաստը: Արդյո՞ք նախամարդն ակն ասելով հասկացել է ուղղակի ֆիզիոլոգիական իմաստով, Բնականաբար ոչ: Ակն ռառի նախնական իմաստը կապված է նրա տեսնելու ֆունկցիայի հետ, իսկ այս էլ՝ «լույս» հասկացության հետ: Մյուս կողմից՝ իր առօրյա կյանքում նախամարդը տեսնում էր զազանների աչքերը մթության մեջ որպես լուսատուներ, եվ բնական է, որ այդ բոլորի շնորհիվ նրա գիտակցության մեջ աչքի բնորոշ հատկանիշ էր ըմբռնվում նրա՝ լույսի աղբյուր լինելը. այսպիսով՝ նախնական շրջանում մարդը գիտակցում էր աչքը որպես լուսատու և ոչ միայն այդ, այլև աչքի տեսնելու ունակությունն էլ նա կապում էր լույսի հետ, որովհետև նա փորձից արդեն գիտեր, որ մթության մեջ ավելի վատ է տեսնում, քան լույսով: Այս մտածողությունը հիմնադրվելով պահպանված է հայերեն թափք լույսը՝ արտահայտության մեջ, որ մի թանկարժեք վերապրուկ է նախնական մտածողության: Հենց յուր այս հատկանիշով էլ աչքը կապվում է արեգակի հետ. դարձյալ իր փորձից մարդը, թեկուզ նախնական վիճակում, գիտեր, որ ցերեկվա լույսի աղբյուրը արեգակն է: Ուստի և՛ աչքը և արեգակը նրա գիտակցության մեջ նույնանում էին որպես լուսատուներ: Բայց այդ դեռ բավական չէր. աչքն ու արեգակը նույնանում էին նաև մի այլ կողմով: Մարդը փորձից գիտեր, որ տեսնելու ժամանակ աչքը շարժվում է, ըստ նրա գիտակցման՝ պտույտ է գործում, պտտվում է, և նա աչքի «լույս տալը» (— տեսնելը) կապում էր աչքի շարժման հետ: Բայց նույն շարժումը ըստ նախամարդու մտածողության, հատուկ էր նաև արեգակին: Ուստի և՛ աչքն ու արեգակը նախամարդու գիտակցության մեջ նույնանում էին ոչ միայն իրենց լուսատուներ, այլև իրեն շարժվող լուսատուներ, ըստ որում, լույս տալը և պտտվելը ըմբռնվում էին որպես անբաժանելի միասնություն. առանց մեկի.

¹ Բացահայտություն է կազմում ընկ. Ա. Դարբյանի աշխատանքը՝ «Ակազ. Ն. Մաթի պաշարը ռասայականության գեմ լեզվաբանության մեջ», Տեղեկագիր ՍՍՌԴ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի, № 2, 1943 թ.:

ըստ այդ մտածողության, մյուսը չէր կարող տեղի ունենալ: Այստեղիս արդեն ընականաբար բխում է այն, որ աչքը և արեգակը կարող էին ստանալ նույն անունը: Ուստի՞ թե արեգակն, ակն արեգական արտահայտությունները, որոնցից առաջինը այսօր էլ գործածվում է իբրև բառ, բխում են այդ մտածողությունից: Ժիշտ հայերենի հակառակ երևույթն ենք գտնում իռլանդերենում. եթե հայերենում ակն նախ վերաբերում է աչքին՝ նշանակելով «լուսատու, լուսավոր» և ապա՝ հատկացվում նաև արևին, ապա՝ իռլանդերենում նախապես «արեգակ» նշանակող sun բառն է հետագայում վերագրվում աչքին: Այսինքն՝ երկու դեպքում էլ աչքի և արեգակի նույնությունը՝ նախնական մտածողությամբ՝ առաջ է բերում այդ երկուսի անվանման նույնությունը: Եվ այս երևույթը կարելի է գտնել բազմաթիվ ուրիշ լեզուներում ևս:

Եթե աչք և արև նույնանում են, ապա դրանից ինքնին բխում է եռյս-ը: Մտի բազմաթիվ աշխատությունների մեջ ցույց է տրված արև և կյանք հասկացությունների միասնությունը: Արև բառը բազմաթիվ լեզուներում, ըստ հնդարևական վերլուծությունների, նշանակում է նաև կյանք: Հայերենում էլ մենք ունենք այդ իմաստը «արևդ մեռնի», «իմ արևը (=կյանքս) վկա» և այլ արտահայտությունների մեջ: Իսկ դրա հետ սերտորեն կապված է հույսի զաղափարը: Ուստի և՛ ակն «աչք→արև→հույս» իմաստային անցումները միանգամայն օրինալափ են նախնական մտածողության համար:

Ակն «մատանու աչք», առհասարակ՝ «թանկագին քար» (հմտ. ակնենեղեն) դարձյալ կապվում է նույն հասկացության հետ՝ ըստ թանկագին քարերի փայլի, մանավանդ, երբ նկատի ունենանք այնպիսի թանկագին քարեր, որոնք միության մեջ ուժեղ փայլ են տալիս և, հետևաբար, ըստ նախնական մտածողության, «լույս են արձակում, լուսատու են», ուստի և՛ ակն «աչք» են: Ակն «աղբյուրի ակունք» կապվում է նույն հասկացության հետ՝ աչքի հետ՝ հստակությամբ, պարզությամբ հատկանիշով, որ ինքնին պարունակում է լույս հասկացության մեջ (համեմատել լուսավոր «պայծառ, հստակ, ջինջ», «պարզ է լույսի պես» և այլն): Նշանակում է աղբյուրի ակունքը նույնպես լուսավոր է (հստակ է), այսինքն՝ ակն «աչք» է: Վերջապես՝ ակն «անիվ» բառը նույն մտածողությամբ կապվում է դարձյալ աչքի և արևի հետ, բայց արդեն ոչ թե իբրև լուսատու, այլ իբրև պտտվող, ուստի և՛ նա ևս ակն «աչք» է կամ արեգակն է: Այս վերջին՝ պտտվելու հատկանիշով արեգակի հետ նույնանում է նաև երկինքը, որ որոշ լեզուներում կոչվում է պտտվող, անիվ. ինչպես՝ պարսկերենում چرخ «անիվ» և «երկինք» և այլն: Ինչպես տեսնում ենք, այդ նոր իմաստներ ստանալը արդյունք է հասարակական այն մտածողության, որով մեզ համար այլևս իրար հետ տրամաբանորեն որևէ կապ չունեցող առարկաներն ու երևույթները կապակցվել են միմյանց հետ և արտահայտվել միևնույն բառով: Իսկ այն նշանակում է, որ մենք իմաստների այդպիսի անցումները պետք է կարողանանք բացատրել պատմական մոտեցմամբ և ոչ թե այսօրվա պատկերավոր արտահայտություններով: Այս չի նշանակում, իհարկե, որ մենք բոլորովին ժխտում ենք պատկերավոր արտահայտությունների գոյությունը, թեկուզ ամենանախնական ժամանակներում, և նրանց զերը բառերի

իմաստային անցումների մեջ: Ո՛չ, պատկերավոր արտահայտությունները միշտ էլ մեծ դեր են կատարել և կատարում են լեզվի մեջ: Բայց դրանցով բացատրել բառերի իմաստային անցումները անկարելի է, որովհետև պատկերավոր արտահայտությունը ինքնին մեղ ոչինչ չի ասում դրանց մասին. դեռ ավելին՝ իրենք, այդ պատկերավոր արտահայտությունները՝ կարոտ են բացատրության: Որպեսզի իմանանք, թե ինչու այս կամ այն իմաստային անցումը կատարվել է, թեկուզ պատկերավոր արտահայտության՝ շնորհիվ, պետք է առաջին հերթին տարվենք, թե ինչպիսի մտածողության շնորհիվ է առաջացել հենց այդ պատկերավոր արտահայտությունը: Օրինակ, որոշ լեզուներում աչք նշանակող բառը նշանակում է նաև խռոչ, անցք, ինչպես՝ հունարեն $\delta\mu\alpha$ ($< \sigma\pi-\mu\alpha$) «աչք», $\omega\psi$ «աչք» և նույն արմատից $\sigma\pi\gamma$ «ծակ, բացվածք», ուսերեն $\sigma\kappa\sigma$ «աչք» և նույն արմատից՝ $\sigma\kappa\theta$ «պատուհան, լուսանցք», լիովաներեն $\sigma\kappa\iota\varsigma$ «աչք» և $\sigma\kappa\iota\varsigma$ «սառույցի ճեղքվածք, անցք» և այլն: Այդպես էլ հայերենում ունենք ակն «փուս, անցք» առհասարակ և «փեթակի ակն»¹, որի մեջ ակն նշանակում է փեթակի այն անցքը, որով ելումուտ են անում մեղուները: Մենք կարող ենք, իհարկե, ասել, թե այստեղ ունենք պատկերավոր արտահայտություն ըստ այն բանի, որ աչքն էլ տեղավորված է խոռոչի մեջ, ուստի և՛ խոռոչ, բացվածք հասկացությունները կապվում են աչքի հետ: Բայց այդ մեղ ոչինչ դեռ չէր ասի. որպեսզի իմանանք, թե ինչու է այդպիսի պատկերավոր արտահայտությունն ստեղծվել, մենք դարձյալ պետք է դիմենք նախնական մտածողության ուսումնասիրությանը: Այդ ուսումնասիրությունը պարզում է, որ նախնական շրջանում, քարանձավի մեջ ապրող նախամարդու համար անցքն էլ դիտվում է որպես լույսի աղբյուր. քարանձավի մուտքը, որտեղից լույսը թափանցում էր ներս, լույսի աղբյուր էր, լուսատու, հետագայում էլ տան երդիկը, որով տունը լուսավորվում էր, լուսատու էր, ինչպես ցույց է տալիս նաև հայերեն լուսամուտ բառը: Այստեղից բխում է այն, որ աչքի, որպես լուսատուի, հասկացությունը կապվում է ոչ միայն պտերովելու, այլ և «խռոչ, անցք» հասկացությունների հետ, ուստի և ամեն անցք, բացվածք, որ ծառայում է որպես լույսի աղբյուր, աչք էր, ինչպես լավագույն կերպով հաստատում են ուսերեն $\sigma\kappa\sigma$ և $\sigma\kappa\theta$ բառերը: Անցք, բացվածք նշանակելով՝ հետագայում արդեն այդ նախնական բացվածքի, որպես լուսատուի, բնորոշումը մտածողության զարգացման նոր ստադիաներում մթազնվում է, և թրացվածք, անցք (=լույսի աղբյուր) նշանակող ակն բառը հատկացվում է նաև այնպիսի բացվածքների, որոնք լույս ստանալուն չեն ծառայում, ինչպես հունարեն $\sigma\pi\gamma$ բառը, որ նշանակում է «անցք» առհասարակ, լիովաներեն $\sigma\kappa\iota\varsigma$ «սառույցի ճեղքվածք, սառույցի մեջ եղած անցք», հայերեն ակն «անցք» բառը և այլն: Վերջապես ակն «ծակ աչք, բողբոջ» դարձյալ կապվում է աչք հասկացության հետ առաջին հերթին ակն→արև→կյանք→ամուլ միասնական ըմբռնումով, ինչպես որ արևը կյանք է և եւրյս, և աչք, այնպես էլ բողբոջը ամուլն է և հետևաբար՝ կյանք և ակն: Այսպիսով, ինչպես Մառը միշտ շեշտում էր, բառիմաստի

¹ Այն բարբառներում, որոնց մեջ աչքի համար պահպանվել է ակն բառը, ունենք փերպի ակն (օր. Մեղրու բարբառ), իսկ այն բարբառներում, որոնց մեջ անցք է ակն բառը, ունենք փեթակի աչք (օր. արարատյան բարբառ):

անցումներն ուսումնասիրելիս պետք է զիմել ննչաբանական վերլուծություններին և զտնել այն ուրույն մտածողությունը, որ առաջ է բերել այդ անցումները և ոչ թե բացատրել պատկերավոր մտածողությամբ ու պատկերավոր արտահայտություններով, որոնք իրենք էլ բացատրության կարիք են զգում: Ակն քառի իմաստային անցումները, որոնց բացատրությունը տրվեց վերևում, մի ավելորդ անգամ ևս հաստատում են Մառի այդ սկզբունքի ճշտությունը: